## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԲԿԳԿ-ԳՀԾՁԲ-26/55 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **02 հուլիսի 2026թ.**

2026թ. հունիսի 10-ից հուլիսի 02-ը, ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում տեղի ունեցավ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայությունների ձեռքբերման թիվ ԲԿԳԿ-ԳՀԾՁԲ-26/55 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ս. Հայոցյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ, |
| Ա. Երիցյան՝ | Քաղաքաշինության կոմիտեի քաղաքաշինական ծրագրերի իրականացման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական, |
| Ս. Ասրյան՝ | Ջրային կոմիտեի մոնիթորինգի և վերլուծությունների վարչության պետի տեղակալ, |
| Ջ. Ղարագյոզյան՝ | «Ակադեմիական քաղաք» հիմնադրամ, փորձագետ-գնումների մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ս. Հայոցյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները, բացակայում էր Ջրային կոմիտեի ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգերի վարչության խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող՝ Ք. Մարտիրոսյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

6. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 10-ին, ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում ժամը 17:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ին | «Ակադեմիական քաղաքի» ոռոգման համակարգի ներդրման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայություններ | 66,000,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև Մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Մոդուլ» ՍՊԸ | ք. Երևան, Ն. Զարյան 22/3 | 077772670 | info@modul.am | 05020542 |
| 2 | «ՋԻՆՋ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան 0052, Քանաքեռ-Զեյթուն, Քանաքեռի 11-րդ փող., տ. 57 | 011246023 | info@jinjconsult.com | 02511015 |
| 3 | «ՀԳՇՆ» ՍՊԸ | ք. Երևան, Կիևյան 16 | 010274307 | hgsnvh@gmail.com | 00005417 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը

կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

### 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին, ինչպես նաև արձանագրեց, որ Մասնակից/ներ/ի կողմից ներկայացված հայտում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

**«Մոդուլ» ՍՊԸ-ի, ում** կողմից Հավելված 1-ով ներկայացված «ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*» փաստաթղթում բացակայում է սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերի 2.4.1 կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես բացակայում են.

- նախագծման աշխատանքների կատարման N 4.4_2021 պայմանագրի կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը և կատարված աշխատանքների պորտֆոլիոն,
- N MRP/GR/QCBS/SW-16/001 պայմանագրի կատարված աշխատանքների պորտֆոլիոն,
- N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ն պայմանագրի կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունը, ակտը, կատարված աշխատանքների պորտֆոլիոն, իսկ հարկային հաշիվը հաստատված չէ ստացողի կողմից,
- N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ն-1 պայմանագրի կատարված աշխատանքների պորտֆոլիոն, իսկ կատարումը հավաստող հարկային հաշիվը հաստատված չէ ստացողի կողմից,
- N ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1-1, N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/2-Ն, N ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/4-Ն, N17/12/-01, N ՋԿ-ԳՀԾՁԲ-20/5-Ն-1, N ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/61 պայմանագրերի կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունը, ակտը, կատարված աշխատանքների պորտֆոլիոն, հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը,
- N ՋԿ-ԳՀԾՁԲ-24/9-Ն, N ԱՐԵՆԻՀ-ՀԲԽՄԾՁԲ-01/26 պայմանագրերի կատարված աշխատանքների պորտֆոլիոները,
- N ՀՀ ԱՄ ԹՀԲՄԽԱՇՁԲ-24/117-4 կատարումը հավաստող հարկային հաշիվը հաստատված չէ ստացողի կողմից,
- N ՊԿԱԾ/ՆԱԽԾԱՌ/26-04 կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը և կատարված աշխատանքների պորտֆոլիոն:

**«ՋԻՆՋ» ՍՊԸ-ի, ում** կողմից ներկայացված հայտում բացակայում է Ընթացակարգի հրավերի 2.4.1 կետի 3-րդ ենթակետով սահմանված մասնագետներից՝ Ջեմմա Ջազյանի

դիպլոմը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերի 2.4.1 կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես բացակայում են.

- N 16UAR001-001/S/04-17 պայմանագրի կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունը, ակտը, կատարված աշխատանքների պորտֆոլիոն,
- «Աշխատանքների կատարման մասին» N 14, N YWIP-UPdCons/01-1, N JINJ-210319-01, N Ջ-Աq/20-01, N Ջ-Գղն/20-03, N Ջ-ԳՓԴ/22-03 պայմանագրերի և «Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման եռակողմ պայմանագրի» կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը և կատարված աշխատանքների պորտֆոլիոն,
- N YWIP-UPdCons/02-1 պայմանագրի կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը և կատարված աշխատանքների պորտֆոլիոն,
- N ՊԿԱԾ/ՆախագծՆԾ/03-2019 պայմանագրի կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը և կատարված աշխատանքների պորտֆոլիոն, պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված «Ա»-ն և «Բ»-ն, ինչպես նաև արտացոլված չէ գնման առարկան,
- N 123SCA-JINJ/15-08 պայմանագրի կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունը, ակտը, կատարված աշխատանքների պորտֆոլիոն, պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ը (Приложение I),
- N IRFSP/TA/qCBS-2016/015 պայմանագրի կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունը, ակտը և պայմանագրի անբաժանելի մասը կազմես Ա, Բ, Գ, Դ, Ե Հավելվածները:

**«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի, ում** կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերի 2.4.1 կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես բացակայում են.

- N ՋԿ-ԳՀԾՁԲ-24/1-Ն-1 պայմանագրի կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը, կատարված աշխատանքների պորտֆոլիոն,
- N ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1 պայմանագրի կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը, կատարված աշխատանքների պորտֆոլիոն, իսկ հանձման-ընդունման 1-ին արձանագրությունը և ակտը ընթեռնելի չէ (էջ 47-48),
- N ISMP/CQS/SW-21/001-D, N ISMP/CQS/SW-21/002-D պայմանագրերի կատարված աշխատանքների պորտֆոլիոները,
- N ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/3 պայմանագրի կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը, կատարված աշխատանքների պորտֆոլիոն, իսկ հանձման-ընդունման արձանագրություն-ակտը ընթեռնելի չէ,
- N ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/2-Ն-1 պայմանագրի կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը, կատարված աշխատանքների պորտֆոլիոն,
- N ISEP/AF/SSS/CS-19/001 պայմանագրի կատարված աշխատանքների պորտֆոլիոն, իսկ ներկայացված հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը և հանձման-ընդունման արձանագրություն-ակտը ընթեռնելի չեն,

- N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/3-Ն/1 պայմանագրի կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը, կատարված աշխատանքների պորտֆոլիոն, ինչպես նաև պայմանագիրը ընթեռնելի չէ,
- N ISMP/GR/QCBS/SW-14/001 պայմանագրի կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունը, ակտը, կատարված աշխատանքների պորտֆոլիոն,
- N ISEP/AF/SSS/CS-18/002, N ISEP/CQS/SW-16/002-D պայմանագրերի կատարված աշխատանքների պորտֆոլիոն, իսկ հանձման-ընդունման արձանագրությունը, ակտը և հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը ընթեռնելի չեն,
- N BMZ N 2013 66 343, BMZ N 2009 66 515 պայմանագրի կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1-ին | «Ակադեմիական քաղաքի» ոռոգման համակարգի ներդրման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայություններ | «Մոդուլ» ՍՊԸ | 66,000,000.00 | 35,000,000.00 | 7,000,000.00 | 42,000,000.00 |
| | | «ՋԻՆՋ» ՍՊԸ | | 51,070,000.00 | 10,214,000.00 | 61,284,000.00 |
| | | «ՀԳՇՆ» ՍՊԸ | | 49,200,000.00 | 9,840,000.00 | 59,040,000.00 |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2026թ. հունիսի 25-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված

անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 29-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

2026թ. հուլիսի 02-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| **Չ/Հ** | **Մասնակցի անվանումը** | **Գնահատման արդյունքը** |
|---|---|---|
| 1-ին | «Մոդուլ» ՍՊԸ | բավարար |
| | «ՋԻՆՋ» ՍՊԸ | բավարար |
| | «ՀԳՇՆ» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2026թ. հուլիսի 02-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակիցներին, որոնք ներկայացված են ստրև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| **Չափաբաժնի N** | **Մասնակցի անվանումը** | **Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X"** | **Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/** |
|---|---|---|---|
| 1-ին | «Մոդուլ» ՍՊԸ | X | 35,000,000.00 |
| | «ՋԻՆՋ» ՍՊԸ | | 51,070,000.00 |
| | «ՀԳՇՆ» ՍՊԸ | | 49,200,000.00 |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2026թ. հուլիսի 02-ին Հանձնաժողովը որոշեց, որպես Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցների թվից այն Մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը Հանձնաժողովին ներկայացրեց Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարության/ների տեքստերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարության/ների տեքստը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ 2026թ. հունիսի 05-ին ներկայացվել է հարցում, որին 2026թ. հունիսի 05-ին տրվել է պարզաբանում, իսկ հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված Մասնակից/ներ/ին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում Մասնակիցը

կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ս. Հայոցյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Երիցյան ____________

Ս. Ասրյան ____________

Ջ. Ղարագյոզյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան ____________